XIV

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԱԳԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (XVII Դ.)

Այս ժամանակագրությունը գտնվում է Մատենադարանի № 4723 Հայսմավուրքի տարբեր էջերի ներքևի լուսանցքներում։ Այն պետք է որ գրած լինի ձեռագրի գրիչ Գրիգոր դպիրը (որին կոչում են Վարագեցի կամ Վանեցի), Վարագում, ձեռագրի ընդօրինակության ժամանակ՝ 1684 թվին, կամ դրանից մի փոքր հետո։ Առաջին անգամ այս ժամանակագրությունից մի քանի փոքրիկ հատվածներ Ղ. Փիրղալեմյանը հրատարակեց[1]։ Այնուհետև հիշվել է (1900 թ.) Ղ. Փիրղալեմյանի անտիպ աշխատությունների ցուցակում[2], որտեղ ժամանակագրության մասին կարդում ենք. «ժբ. Վանեցի Գրիգոր դպիր. «գրէ սա ի լուսանցս յինքենէ ընդօրինակեալ Յայսմաւուրի զանցս և զդիպուածս բազում սկսեալ 1308—1682-ի տարեգրութեան սորա գտանին բազում բանք վասն պատմութեան Վանայ»[3]։

Ղ. Փիրղալեմյանի հավաքած նյութերից վերցնելով ժամանակագրության ամբողջական բնագիրը հրատարակեց Գ. Աղանյանցը (1912 թվին[4]), որի ներածականում նա գրում է. «Նրա (Գրիգոր Վարագեցու—Վ. Հ.) անունով մեզ հասել է մի ժամանակագրություն, որ գտնվում է Վանի ս. Վարդան եկեղեցում պահված ինքնագիր Հայսմավուրքի վերջը...[5]»։ Սակայն, ինչպես արդեն նշեցինք, ժամանակագրությունը գտնվում է ձեռագրի ոչ թե վերջում, այլ տարբեր էջերի ներքևի լուսանցքներում։ Ավելին, այդ լուսանցքներում գրված են նաև զանազան հանելուկներ և գրչի բանաստեղծություններից մեկը՝ «Ծուխ քաշողներ»-ի մասին։

Ձեռագրի բոլոր էջերն ուշադիր ստուգելուց և ներքևի լուսանցքներում եղած ժամանակագրական տեղեկությունները հավաքելուց հետո, ստացվեց առաջարկվող բնագիրը, որը օգալի տարբերություններ ունի Գ. Աղանյանցի հրատարակած բնագրից։ Այս երկու բնագրերի համեմատությունը ցույց տվեց, որ «Դիւան»-ում հրատարակվածը բավական ընդարձակ է, և սրի բազմաթիվ վկայություններ բացակայում են այստեղ։ Իսկ այս բնագրի սկզբի մի քանի վկայությունները տեղ չեն գտել Գ. Աղանյանցի հրատարակած բնագրում։ Շարունակելով ժամանակագրության հետ կապված

---

1 «Նոտարք Հայոց», էջ 123, 171, 207, 227։

2 Տէս Յ. Թոփճեան, Ցուցակ ժողովածուաց Դպրեան Եաչիկ վ.-ի, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 58։

3 Նույն տեղում, էջ 58։

4 «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Ժ, էջ 59—66։

5 Նույն տեղում, էջ ԼԴ։

նյութերի ուսումնասիրությունը, եկանք այն եզրակացության, որ Ղ. Փիրղալեմյանի հավաքած նյութերից «Դիւան»-ում Գրիգոր Վարագեցու անունով հրատարակված ժամանակագրությունը չի համապատասխանում Գրիգոր Վարագեցու ժամանակագրության բնագրին. վերջինիս վրա Ղ. Փիրղալեմյանը զոնազան սկզբնաղբյուրներից կատարել է ավելացումներ։ Դրանց մեծ մասը նա քաղել է նույն Հայմավուրքի հոդվածներից մեկին կցված ժամանակագրությունից[1]։ Վերջինս, որը անտարակույս կազմել է XVI դարի վերջի և XVII դարի սկզբի մեզ անհայտ մի անձնավորություն[2], Հայմավուրքում ընդօրինակել է Գրիգոր Վարագեցին։ Թե ինչու է գրիչն այդպես վարվել, արդեն ցույց տվեցինք վերևում[3]։

Վկայությունների մնացած մասը, որոնք գերազանցապես համառոտ վկայարանություններ են, Ղ. Փիրղալեմյանը հավանաբար համառոտել է Հայմավուրքից և կամ Ա. Դավրիժեցու պատմության համապատասխան գլուխներից։ Այսպիսով, Գրիգոր Վարագեցու ժամանակագրության իսկական բնագիրը հիմա է հրատարակվում։ Ժամանակագրությունը, ինչպես ասեցինք, գրված է ձեռագրի էջերի ներքևի լուսանցքներում, ժամանակագրական տեսակետից ոչ հաջորդաբար։ Առաջարկվող բնագիրը կազմելիս, նկատի ունեցանք ոչ թե ձեռագրի էջերի հաջորդական, այլ դեպքերի ժամանակագրական կարգը։ Ժամանակագրությունն սկսվում է Հայոց Կ (611) թվականով, և ոչ թե 1308, ինչպես սխալմամբ նշում են ուրիշները[4]։ Ի դեպ, ժամանակագրության առաջին երեք վկայությունները ձեռագրում գրված են Հայմավուրքի համապատասխան հոդվածների տակ, ներքևի լուսանցքներում, որպես շարադրված նյութի ամփոփում։ Հավանաբար այդ բանին հետևելով Ղ. Փիրղալեմյանն էլ Հայմավուրքի այն առանձին հոդվածները, որոնք վերաբերում են XVII դարի նահատակներին, համառոտել է և մուտել մինչև հիմա մեզ ծանոթ Գրիգոր Վարագեցու ժամանակագրության մեջ։

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում բնագրի վերջին մի քանի փոքրիկ փաստերը, որոնք վերաբերում են հեղինակի կենդանության ժամանակին։

---

[1] Տես XII ժամանակագրությունը, էջ 283—284։

[2] Տես վերևում, էջ 281։

[3] Տես վերևում, էջ 281։

[4] Տես Ց. Թոփչեան, Ցուցակ ժողովածուաց Դպրեան Թաղիկ վ-ի։ մասն Բ, էջ 38, «Դիւան», գիրք Ժ, էջ ԼԴ։

Ի Կ (611) թվին երևեցաւ Մահմեդ։ 272բ

Ի ՃՀԱ (722) թվին Յոհան Օձնեցին պայծառացաւ ի Հայս։ 342բ

Ի ՇԱ (1052) թուին տէր Պետրոս կաթողիկոսն երեր զսուրբ նշանն ի Պոնտոս, որ է Տրապիզոն, և առաջի Վասիլ կայսերն ի
5 ՅրՈ[ր]Հ[ն]էն[ք] զգետն յետս դարձոյց։

Թուին ՇՄ (1101) ոչ վառեցաւ լոյս Յերուսաղէմ յաւուր շաբաթու, այլ ի կիրակի։ 279ա

Թուին ՇՄԱ (1102) ի Մաղկազարդին ծառազատիկ արարին ժ (10) ազգք, բաց ի Հայոց և յԱսորոց։

10 Թվին ՉՄԵ (1306) ի գաւառն Մշոյ, Ղարպանտայ խանն հրովարտակ եհան ի վերայ քրիստոնէիցն, որք ընդ իշխանութեամբն իւր էին՝ կամ դառնալ ի մոլար օրէնսն Մահմեդի և կամ տալ || 255բ 256ա
խարաջ ամէն մարդ իւրոյ գլխոյն Ը (8) դահեկան և ի վերայ աջ թևին կարել սև կարկատան և առնուլ թուք և [ա]պտակ յե-
15 րեսն և ճողուլ զմորուսն։ Իսկ բանաւոր հօտքն Քրիստոսի || անխախտելի մնացին ի հաւատս. և ետուն զամենայն հարկսն զոր խնդրեցին և յանձն առին զնախատինս և զտանջանս և զլուծն Քրիստոսի ի վերայ աջոյ ուսոցն իւրեանց, որ է սև կարկատանն։ || 256բ 257ա
Իսկ ամբարիշտ խանն Ղարբանտայ իրրև ետես եթէ այնու ոչ
20 կարաց յաղթել քրիստոնէիցս, հրամայեաց կամ դառնալ ի պիղծ օրէնն Մահմեդի և կամ զամենեսեան ներքենիս առնել || և զմի աչքն հանել, յորմէ հարուածոյ բազումք մեռան վասն անուանն Քրիստոսի[1]։ 257բ

Թուին ՊԼԳ (1384) Բուրհան զադինն Սեվաստայ զՍտեփանոս եպիսկոպոսն նահատակեաց և զսրբոց || Քառասնից վանքն 258ա
քակեաց։

ՊԼԵ (1386) թվին Լանկ Թամուրն եկաւ ի Վան և կոտորեաց աւելի քան զԳՌ (3000) մարդ. և ելեալ գնաց ի Սեվաստ և աւերեաց զնա և անտի գնաց ի || Ցանկուրիայ, զսոնդքարի եղրայրն 258բ
30 զԻլտրում Պայազիտն եդ ի զաֆասն[2]։

Դարձեալ ՊՄԵ (1406) թվին Ղարայ Ուսուֆն, որ փախեաւ ի Լանկ Թամուրէն, գնաց յԱրճէշ և յԱրծկէ. և || Շմէզդինն ընկերեալ նմա արարին շատ աւեր Վանայ և Ոստանայ։ Եւ Շմեզդնի հեծեալքն եկին և այրեցին զՇատուան[3]։ Եւ բարկացեալ Ամիր 259ա
35 Էզդինն գնաց և այրեաց Կ (60) գեօղ ի Բաղիշոյ[4]։

Թուին ՊՂ (1441) զվուսաւորչի սուրբ աջն գողացան ի Սըսայ և բերին յԷջմիածին։ 248բ

Դարձեալ ՉԺԱ (1462) թուին Զաքարիայ կաթողիկոսն տարաւ || զսուրբ աջն ի Ցաղթամար կղզին. 249ա

Ի Ջ և Բ (1453) թվին սուլթան Մուհամատն էառ զԸստամբոլ և զԿաֆայն, զԱղքրմանն և զՏրապիզոն և զայլ բազում քաղաքս և գաւառս[5]։ 335ա

Ի թուին ՉԽ (1491) Վրդանէս եպիսկոպոսն դարձեալ դողացաւ զսուրբն աջն յԱխթամարայ և երեր յԷջմիածին։ 249ա

|| Ջ և ԿԵ (1516) թվին սուլթան Սէլիմն էառ զՑամիթ։ 334բ

ՉՁԲ (1533) թվին զՏեու վանից Հայրապետ արեղայն այրեցին հրով։ 271բ

ՉՁԴ (1534) ամին ի Շնքուռկու գեղէն էրէց մի այրեցին հրով։

Ի ՉՁԴ (1534) թվին սուլթան Սուլէյմանն[6] էառ զԲարելոն, որ է Բաղդատ։ 235բ

ՉՁԵ (1536) ամին զիսօջայ Օդջայն նահատակեցին ի Սեբաստ։ 272ա

ՉՁԸ (1539) թվին Հոռոմք Ծաղկազարդին Զատիկ արարին։

|| Դարձեալ ի ՉՂԹ (1550) թվին սուլթան Սուլէյմանն եկ ի վերայ Շամիրամակերտու և էառ զՎան։ 235բ

|| Դարձեալ ի թուին ՌԿԴ (1614) Շահաբաղ շահն տարաւ զսուրբ աջն ի Ցասպահան, և ՌՁԷ (1638) թվին Փիլիպոս կաթողիկոսն էրեր ի սուրբ Էջմիածինն[7]։ 200ա

|| Դարձեալ ՌՀԵ (1626) թվին Օսմանցիքն Գ (3) ոսկի խարաջ առին ի Հայոցս։ 257բ

|| Ի թվին Հայոց ՌՃԻԷ (1678) Բաքրը փաշայն Վանայ զիսօջայ Ալխասն կախեաց անմեղ և ոչ եթող թաղել։ Սորա մականունն Լէշկեր ասէին։ Սա բազում հարկս վերացոյց ի Հայոցս[8]։ 283ա

|| Թուին ՌՃԻԸ (1679) Վանայ քաղաքի փաշէն, որոյ անունն էր Մուսլի, հրամայաց Հայոցն մորուս թողուլ[9]։ 259բ

Դարձեալ ի ՌՃԻԹ (1680) թվին Զանփօլատ օղլի փաշայն || հրամայեաց Հայոցն զգօտին առնուլ ի գլխոցն և գդակ դնել[10]։ 260ա

Դարձեալ ի սոյն թվին Թուխաթցի Վարդան վարդապետն զՀայոց կանանց բէչի սրմայն վերացոյց։

|| Թվին ՌՃԼԱ (1682) սուրբ Ցակոբ եկեղեցին նորոգեցաւ ի Վան, ի ժամանակս Ալի փաշային[11]։ 138բ

|| ՌՃԼԱ (1682) թվին Ալի փաշայն Վանայ զԳրիգորն և զՍտեփաննոսն անմեղ կախեաց, յորոց վերայ լոյս ծագեցաւ[12], 319ա

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այս վկայությունը հաստատում է մի ժամանակակից, իր հիշատակարանում (տե՛ս ՀՁՀ, էջ 46), հմմտ. Ա. Դավրիժեցի, էջ 625—626։

2. Պատմական մի շարք եղելություններ այստեղ գրված են 1386 թվի ներքո. սառույցն այն է, որ Լանկ թեմուրը 1386 թվին լինում է Վանում (տես Մծ, I, էջ 118, 122; ծանոթ. 26, վերևում, էջ 412)։

3. Բնագրում «զլատուան» ձևով։

4. Տե՛ս և հմմտ. Մծ, I, էջ 119։

5. Մի քանի եղելություններ դարձյալ նշված են մեկ տարեթվի տակ։

6. Բնագրում սկզբում գրված է «Սէլիմն», հետո այդ անունը վերցրել են. փակագծերի մեջ և ներքևում ավելացրել «Սուլթանն»։

7. Տես և հմմտ. Մծ, I, էջ 325։

8. Այս վկայությունը որոշ մանրամասնություններով տե՛ս ներքևում, էջ 413—414։

9. Տես և հմմտ. նույն տեղում, էջ 414։

10. Տես և հմմտ. նույն տեղում, էջ 414։

11. Տես և հմմտ. նույն տեղում, էջ 414։

12. Տես և հմմտ. նույն տեղում, էջ 414։